

Զրույց - զեկուցում Թումանյանի միջնակարգ դպրոցում

<<Թմրամոլություն և Հանցագործություն >> թեմայով

Մարդկությունն իր պատմության ճանապարհին անցել է բազմաթիվ աղետների եւ դժբախտությունների միջով: Որպես կանոն՝ պատերազմներն սկսվել եւ ավարտվել են, ջրհեղեղները, փոթորիկներն ու երկրաշարժները եւս ունեցել են սկիզբ ու վերջ: Մակայն թմրամոլություն կոչվող հրեշը ոտք դրեց Երկիր մոլորակ եւ ոչ միայն չի հեռանում, այլեւ մշտական բնակություն հաստատելով՝ սնվում է բացառապես մարդկային կյանքերով՝ կործանելով ճակատագրեր, քայքայելով ընտանիքներ, ցավ ու դառնություն պատճառելով միլիոնավոր մարդկանց:

Չկա ուրիշի դժբախտություն, հատկապես երբ խոսքը վերաբերում է երիտասարդներին եւ դեռահասներին: Թմրամոլության խնդիրն առկա է եղել դեռեւս վաղ ժամանակներից: Ոչ ոք, սակայն, չէր պատկերացնի, որ կգա մի ժամանակ, երբ այն կկրի զանգվածային բնույթ՝ վտանգելով սերունդների առողջությունն ու կյանքը:

Թմրանյութերը, ցավոք, դարձել են ժամանակակից շատ երիտասարդների ոճն ու կերպարն ամբողջացնող արքեսուարներից մեկը: Մինչ գիտնականները փորձում են գտնել կյանքի կենսահեղուկը՝ երկարակեցությանը նպաստելու համար, թմրանյութերով զվարճանալը շատ երիտասարդների եւ անչափահասների տանում է դանդաղ ինքնասպանության: Եթե տարիներ առաջ 16-17 տարեկան թմրամոլը համարվում էր կլինիկական հազվագյուտ երեւույթ, ապա այսօր որոշ երկրներում դա առօրեական է դարձել:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ ողջ աշխարհում գրանցված է 50 միլիոնից ավելի թմրամոլ: Միայն Ռուսաստանում գրանցված են մոտ մեկ միլիոն, որի 75%-ը երիտասարդներ են: Եվ սա միայն սառցաբեկորի տեսանելի մասն է: Բարեբախտաբար, մեզ մոտ անչափահասների ու երիտասարդների թմրամոլությունն այնքան տարածված չէ, որքան Ամերիկայում կամ Ռուսաստանում: Մակայն հաշվի առնելով տարածման միտումները՝ իրավապահ մարմինների ակտիվ պայքարի հետ մեկտեղ անչափ կարեւոր է հասարակության մոտեցումը: Շատ ավելի հեշտ է կանխել, քան բուժել հիվանդությունը: Բժշկության այս ոսկե կանոնն առավել արժեւորվում է, երբ խոսքը վերաբերում է թմրամոլությանը: Մենք պետք է գիտակցենք, որ պետության եւ իրավապահ մարմինների կողմից իրականացվող միջոցառումները շատ ավելի արդյունավետ կլինեն, եթե կարողանանք հասնել այն բանին, որ նվազի թմրանյութերի պահանջարկը: Ինչպես ասում են՝ եթե չկա պահանջարկ, չի լինի առաջարկ: Հետեւաբար, շատ կարեւոր է հասկանալ ծնողների եւ ընտանիքի դերը, բացահայտել դրդապատճառները, որոնք դեռահասներին ստիպում են տարվել թմրանյութերով:

Պետք է զգոն եւ ուժեղ լինենք՝ դիմակայելու նրանց, ովքեր սնվում են մեր երեխաների կյանքով: Թմրանյութեր իրացնողների համար մեծ հաշվով միեւնոյն է, թե ում կնստեցնեն ասեղի վրա՝ ծերունու, երիտասարդի, թե երեխայի: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ թմրաբիզնեսն աշխարհում համարվում է ամենաեկամտաբերներից մեկը:

Դեռահասության տարիքում երեխաները կարող են ընկնել շրջապատի ազդեցության տակ: Այս տարիքում պատանիները բաժանվում են խմբերի, որոնք հիմնականում ձևավորվում են դպրոցում կամ բակում: Եթե խմբի առավել հեղինակավոր անդամներն արդեն օգտագործում են թմրանյութեր, ապա մյուսները եւս պարտավորվում են դա անել, որպեսզի չմերժվեն խմբի անդամների կողմից, չհամարվեն թույլ, վախկոտ: Լինում են դեպքեր, երբ խմբի անդամների կողմից ճնշում է գործադրվում:

Թմրամոլությունը ինքը հանցագործություն լինելուց բացի ծնում է նաեւ այլ հանցագործություններ, որովհետև թմրանյութերի ազդեցության տակ գտնվելով գործում են առանց մտածելու և հաշիվ չեն տալիս իրենց կատարած գործադրությունների համար:

Բժիշկները նշում են մի շարք առանձնահատկություններ, ըստ որոնց կարելի է հայտնաբերել օգտագործում է երեխան թմրանյութ, թե՛ ոչ:

Թմրաբեցումը նման է ակոհոլային արբեցմանը, սակայն առաջինի դեպքում բացակայում է հոտը: Ի հայտ է գալիս անհասկանալի աշխուժություն կամ պասսիվություն: Թմրանյութի ազդեցության տակ գտնվողի դեմքը կարմիր կամ գունատ է, աչքերը՝ մշուշված, բիբերը՝ լայնացած կամ նեղացած:

Փոխվում է երեխայի վարքագիծը. դառնում է շուտ բռնկվող, ագրեսիվ՝ հատկապես ծնողների կամ ընտանիքի անդամների նկատմամբ:

Նկատվում է անտարբերություն նախկինում ունեցած հետաքրքրությունների հանդեպ:

Հաճախակի բացակայում է դասերից: Խուսափում է նախկին ընկերների հետ շփումից:

Փոխարենն ի հայտ են գալիս նոր եւ տարօրինակ ընկերներ:

Առաջ են գալիս տրամադրության չհիմնավորված եւ անսպասելի կտրուկ փոփոխություններ, քնի խանգարումներ, ախորժակի բացակայություն կամ ուտելու անհագ ցանկություն:


Հարկ է նշել, որ այս ախտանիշերը կարող են դրսևորվել նաեւ այլ հիվանդությունների դեպքում: Հետեւաբար, վերջնական ախտորոշումը կարող է տալ միայն բժիշկը:

Որոշ մասնագետներ հանգել են այն եզրակացության, որ եթե մինչև 20-22 տարեկան պատանին կարողանա զերծ մնալ թմրամիջոցներից, հավանականությունը փոքր է, որ հետագայում նա կցանկանա օգտագործել դրանք:

Յուրաքանչյուր մարդ, ով առաջին անգամ թմրադեղ է փորձում, վստահ է, որ երբեք չի դառնա նրա գերին եւ ցանկացած պահի կարող է դադարեցնել այդ ընթացքը: Սակայն իրականում այդ պնտեսանելի ինքնասպանությունը սկսվում է առաջին քայլից, եւ թմրամոլն անդառնալիորեն է ստրկանում:

Իհարկե, յուրաքանչյուր ոք իրավունք ունի տնօրինելու իր կյանքը: Թվում է՝ կարելի է օգտագործել եւ չօգտագործել թմրանյութեր: Թվում է՝ կարելի է արհամարհել հակաթմրամոլային բոլոր քարոզները: Ի վերջո, կարելի է մտածել, որ կյանքը տրվում է մեկ անգամ, եւ պետք է անել այն՝ ինչ կամենաս: Սակայն պետք է գիտակցել, որ մերժելով թմրանյութերը՝ կարող ես բարձրացնել այն ծանրաձողը, որին հենվելու է երկիրդ, անել այն գյուտը, որի շնորհիվ փրկվելու են բազմաթիվ կյանքեր, փրկության այդ ճանապարհը սկսելով քեզնից:

Ոստիկանության Թումանյանի բաժնի ԱԳ և ԸԲԿԲ տեսուչ,

ոստիկանության կապիտան՝  Ս.Տիտանյան

հունվար 2020